ՏԵՂԵԿԱՆՔ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պ-293-24.09.2019-ՊԻ-011/0 **ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~**Հոդված 1.** «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի հունիսի 13-ի ՀՕ-347 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը լրացնել 1.1-րդ և 1.2-րդ մասերով.~~

~~«1.1. Համայնքի բնակչության նախաձեռնությամբ տեղական հանրաքվեի կարող է դրվել համայնքի միավորման կամ բաժանման հարցը.~~

~~1.2. Համայնքի միավորման կամ բաժանման հարցով անցկացված տեղական հանրաքվեի արդյունքները կրում են խորհրդատվական բնույթ:»:~~

Հոդված 1. «Տեղական հանրաքվեի մասին» 2018 թվականի հունիսի 13-ի ՀՕ-347 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը լրացնել նոր 1.1-րդ մասով և 4-րդ մասերով.

«1.1 Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում համապատասխան համայնքների բնակիչները համայնքների միավորման կամ բաժանման հարցով կարող են նախաձեռնել տեղական հանրաքվե: Համայնքի միավորման կամ բաժանման հարցով անցկացված տեղական հանրաքվեի արդյունքները կրում են խորհրդատվական բնույթ:»:

«4. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված տեղական հանրաքվեի դրվող հարցը ձևակերպվում է հետևյալ կերպ. «Համաձա՞յն եք ... (նշվում են կառավարության ներկայացրած նախագծում ներառված բոլոր համայնքների անվանումները) համայնքների միավորմանը (բաժանմանը)։»:

~~**Հոդված 2.** Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում «10 տոկոսի» բառերից հետո լրացնել «,իսկ սույն օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված դեպքում՝ 20~~

~~տոկոսի» բառերով:~~

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով.

«2. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված դեպքում տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնության իրավունք ունեն տվյալ համայնքում տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող մինչև նախաձեռնության գրանցման օրը տասնութ տարին լրացած անձինք:»:

~~**Հոդված 3.** Օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ մասը լրացնել նոր 4-րդ կետով.~~

~~«4) Համայնքի վարչական սահմանում գտնվող՝ օրենքով չարգելված այլ վայրերում:»:~~

Հոդված 3. Օրենքը լրացնել նոր 7.1-ին հոդվածով.

«7.1 Համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում համայնքի բնակիչների կողմից հարցը տեղական հանրաքվեի դնելու կարգը

1.Համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր պետական մարմինը պաշտոնապես ծանուցում է համապատասխան համայնքների ղեկավարներին:

2. Լիազոր պետական մարմնի կողմից ծանուցվելուց հետո համայնքների ղեկավարները եռօրյա ժամկետում իրազեկում են համապատասխան համայնքների բնակիչներին՝ համայնքի ավագանու նստավայրում, ինչպես նաև այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր հինգ հարյուր բնակչի համար, փակցնելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու միջոցով:

3. Սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով գրանցված նախաձեռնող խումբը դիմում է համայնքի ղեկավարին համայնքի բյուջեում տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության կամ օրենքով չարգելված այլ ֆինանսական միջոցներ ներգրավելու հնարավորության հարցմամբ:

4. Հարցումը ստանալուց հետո համայնքի ղեկավարը 3 աշխատանքային օրվա ընթացքում դիմում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով և Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը՝ համայնքում տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափի վերաբերյալ հարցմամբ:

5. Սույն հոդվածի 4-րդ մասում նշված մարմինները 3 աշխատանքային օրվա ընթացքում համայնքի ղեկավարին տրամադրում են անհրաժեշտ տեղեկատվությունը:

6. Տեղեկատվությունը ստանալուց հետո համայնքի ղեկավարը 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչին տրամադրում է տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության կամ դրանց բացակայության վերաբերյալ տեղեկանք:

7. Անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության վերաբերյալ տեղեկանք ստանալու դեպքում նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչը նախաձեռնում է սույն օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հարցի վերաբերյալ նախաձեռնությանը միանալու ստորագրահավաք:

8. Սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված նախաձեռնությանը տվյալ համայնքում տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց առնվազն 20 տոկոսի միանալու դեպքում նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչը դիմում է սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված համապատասխան ընտրական հանձնաժողովին ստորագրությունների վավերականությունը հաստատելու համար:»

~~**Հոդված 4.** Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը «քառորդը» բառից հետո լրացնել «, իսկ սույն օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված հարցով անցկացրած տեղական հանրաքվեի դեպքում՝ ոչ պակաս, քան տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց 50 տոկոսը» բառերը:~~

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի.

1) 1-ին մասում «7-րդ» բառերից հետո լրացնել «7.1-ին» բառերը:
2) 1-ին մասում « հակասում է օրենքին » բառերից հետո լրացնել« կամ չեն տրամադրվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ » բառերը:
3) 3-րդ մասում « որոշումն ընդունելուց » բառերից հետո լրացնել «կամ նախաձեռնող խմբի կողմից հավաքված և անհրաժեշտ քանակի ստորագրությունների վավերականության հաստատման մասին համապատասխան ընտրական հանձնաժողովի որոշումն ստանալուց» բառերը:
4) 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. Տեղական հանրաքվե նշանակելու մասին որոշումը և տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրումը հավաստող փաստաթղթերը համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով կամ համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով: Ներկայացված փաստաթղթերի թերի լինելու դեպքում համապատասխան ընտրական հանձնաժողովը 48 ժամ է տալիս դրանք լրացնելու համար: Այդ ժամանակահատվածում փաստաթղթերը չլրացնելու դեպքում ներկայացված փաստաթղթերը կենտրոնական ընտրական հանձնաժողովի կամ համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի գրությամբ վերադարձվում են համայնքի ղեկավարին:»:

5) 5-րդ մասի գործողությունը դադարեցնել:

~~**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~

Հոդված 5.

1. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել նոր 2.1-րդ մասով.

«2.1 Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված հարցի նախաձեռնության դեպքում Նախաձեռնող խումբը գրանցման համար կարող է դիմել սույն օրենքի 7.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով համայնքի ղեկավարի կողմից իրազեկվելուց հետո 5 օրյա ժամկետում:»:

2. Օրենքի 9-րդ հոդվածի 17-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«17. Նախաձեռնող խումբը ստորագրություններ հավաքելու գործընթացը կազմակերպում է գրանցվելուց հետո՝

1) 60 օրվա ընթացքում,
2) սույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում՝ 90 օրվա ընթացքում,
3) սույն օրենքի 7.1-ին հոդվածով սահմանված դեպքում՝ 30 օրվա ընթացքում:»:

Հոդված 6. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից հետո լրացնել նոր պարբերություն.

« Խորհրդատվական բնույթի տեղական հանրաքվե անցկացվելու դեպքում համապատասխան ընտրական հանձնաժողովը որևէ որոշում չի կայացնում և քվեարկության արդյունքների արձանագրությունը ներկայացնում է համապատասխան համայնքի ղեկավարին և կառավարության լիազորած պետական մարմնին:»

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

~~**ՊՀ-293[4]-24.09.2019-ՊԻ-011/0**~~

~~**ՆԱԽԱԳԻԾ**~~

~~**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**~~

~~**Օ Ր Ե Ն Ք Ը**~~

~~**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**~~

~~**Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» 1995 թվականի նոյեմբերի 7-ի ՀՕ-18 օրենքի (այսուհետ՝ օրենք) 5.1-րդ հոդվածը լրացնել նոր 6-րդ և 7-րդ մասերով.~~

~~«6. Համայնքների միավորման կամ բաժանման հարցով համայնքների բնակչության նախաձեռնությամբ կարող են նախաձեռնվել և անցկացվել տեղական հանրաքվեներ՝ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:~~

~~7. Համայնքները կարող են միավորվել կամ բաժանվել՝ անկախ տեղական հանրաքվեների արդյունքից:»:~~

~~**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~

Պ 293[2] 24.09.2019 ՊԻ-011/0

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրաքվեի մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-155-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «միջազգային պայմանագրերին,» բառերից հետո հանել «վարչատարածքային բաժանմանը,» բառերը։

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածի 15-րդ մասը լրացնել նոր 5-րդ կետով.

« 5) Օրենքով չարգելված այլ վայրերում։»։

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։